600.0188.29.05.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2019 թվականի №188Ա

քաղ. Երևան

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա. որ 2019 թվականի մարտի 12-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է դիմել «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Վահրամ Մարգարյանը՝ ընկերությանը պատկանող ավտոգազալիցքավորման ճնշակայանների (այսուհետ՝ ԱԳԼՃԿ) սպառված բնական գազի հաշվառման, գազասպառման սարքավորումների տեխնիկական սպասարկման համար այլ ընկերությունների համեմատ ավելի բարձր գին վճարելու, ծախսված բնական գազի դիմաց վճարման փաստաթղթերի ներկայացման, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նախաձեռնությամբ առնտրային հաշվառքի սարքերի ստուգաչափումը բաժանորդի հաշվին իրականացնելու, ԱԳԼՃԿ-ներին ամրակցված G-650 և G-250 տիպի առնտրային հաշվառքի սարքերը Ընկերության նախաձեռնությամբ, առանց գնային արժեքների փոխհատուցման, G-160 տիպի առնտրային հաշվառքի սարքերով փոխարինելու, մատակարարված գազի դիմաց Ընկերության կողմից առանց վճարման (հաշվարկային) փաստաթղթի կանխավճար պահանջելու, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնքի Գագարինի խճուղու 61/4 և 61/5 հասցեներում գործող ԱԳԼՃԿ-ների գազամատակարարումը Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի №95Ն որոշմամբ հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ Կանոններ) սահմանված ժամկետի խախտմամբ դադարեցնելու և 2019 թվականի մարտի 7-ին սպառված գազի դիմաց վճարումներից հետո գազամատակարարումը չվերականգնելու վերաբերյալ,

բ. որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ, որի մասին Ընկերությունը տեղեկացվել է Հանձնաժողովի 2019 թվականի մարտի 14-ի №ԱԲ/2.3-59/376-19 գրությամբ,

գ. հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերության կողմից 2019 թվականի մարտի 26-ի №04-31/1386 գրությամբ ներկայացված պարզաբանումները, համաձայն որոնց՝

1) «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի՝ Ընկերության թույլ տված իրավախախտումների մասին պնդումները իրականությանը չեն համապատասխանում, քանի որ Ընկերությունն իր գործողությունները իրականացրել է Կանոններին համապատասխան,

2) հաշվառքի սարքերը չեն կարող ոչ ճշգրիտ աշխատել, քանի որ Ընկերությունը բաժանորդներին մատակարարված գազի քանակը հաշվառում է ստուգաչափված և վկայագրված հաշվառքի սարքերով, որոնք, Կանոնների պահանջներին համապատասխան, պարբերաբար ստուգաչափվում են «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից,

3) գազասպառման սարքավորումների տեխնիկական սպասարկումն իրականացվել է Հանձնաժողովի 2003 թվականի սեպտեմբերի 22-ի №58Ա որոշմամբ «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված №0111 լիցենզիայի պայմանների համաձայն կնքված պայմանագրով՝ երկու կողմերի համաձայնությամբ և ստորագրությամբ, որը 2019 թվականի մարտի 1-ին կողմերի փոխադարձ համաձայնությամբ լուծվել է,

4) առնտրային հաշվառքի սարքերի ստուգաչափումը բաժանորդի հաշվին իրականացվել է Կանոնների 4.8 կետով նախատեսված դեպքերում,

5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնքի Գագարինի խճուղու 61/4 և 61/5 հասցեներում գործող ԱԳԼՃԿ-ների գազամատակարարումը դադարեցվել է համաձայն Կանոնների 6.5 և 6.9 կետերով սահմանված՝ ծախսված գազի վճարման ժամկետները խախտելու համար,

6) Կանոնների 6.6 կետով սահմանված կարգով բաժանորդի կողմից պարտքը մարելուց հետո գազմատակարարումը չի վերականգնել՝ հաշվի չառնելով «Տելեմաք Գազ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերանվանման և վերջնահաշվարկ կատարելու վերաբերյալ Կանոններով ամրագրված պահանջը,

դ. 2019 թվականի ապրիլի 11-ին վարչական վարույթի շրջանակում Ընկերության, «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Չափագիտական ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչների հետ համատեղ տեղի ունեցած քննարկման արդյունքները, որից հետո «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի առաջարկությամբ ԱԳԼՃԿ-ներին ամրակցված տարբեր աշխատանքային ռեժիմներում առնտրային հաշվառքի սարքերով հաշվառված բնական գազի ժամանակաչափում իրականացնելու նպատակով, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի երկու անգամ 10-ական օրով երկարաձգվել է վարչական վարույթի ժամկետը,

ե. որ 2019 թվականի ապրիլի 25-ին «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գազաբաշխման կայանում տեղի է ունեցել «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ամրակցված առնտրային հաշվառքի սարքով հաշվառվող բնական գազի ժամանակաչափում, որի արդյունքներով կազմվել է համապատասխան արձանագրություն,

զ. որ վարչական վարույթի շրջանակում իրականացված առնտրային հաշվառքի սարքի ժամանակաչափման արդյունքների ամփոփման նպատակով Հանձնաժողովը փոխօգնության կարգով դիմել է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝ «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության դիրքորոշումն ստանալու նպատակով, և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասը, 30 օրով երկարաձգվել է 2019 թվականի մարտի 12-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը,

է. որ վարչական վարույթի շրջանակում Հանձնաժողովը 2019 թվականի մայիսի 7-ի №ԱԲ/2.3-59/753-19 գրությամբ դիմել է Ընկերությանը՝ պահանջելով «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից շահագործվող բոլոր ԱԳԼՃԿ-ների ստուգաչափված առնտրային հաշվառքի սարքերի՝ ստուգաչափում

իրականացնելու համար նախաձեռնող կողմի, հանման ակտերի, չափագիտական մարմնի կողմից ներկայացված եզրակացությունների, եզրակացությանը կից ստուգաչափման ու նորոգման ծախսերը իրականացնող կողմի վերաբերյալ տեղեկատվություն, որը Ընկերությունը ներկայացրել է, համաձայն որի՝ առնտրային հաշվառքի սարքերի ստուգաչափման՝ 431.749 դրամ արժողությամբ ծախսերը Ընկերության փոխարեն փոխհատուցվել են «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից,

ը. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից 2019 թվականի ապրիլի 29-ի ՈԳԲ/2.3-59/699-19 գրությամբ ներկայացվել է «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության դիրքորոշումը՝ առնտրային հաշվառքի սարքերի տիպաչափերի ճշգրիտ ընտրության հարցերի վերաբերյալ, համաձայն որի՝ «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ԱԳԼՃԿ-ներում տեղակայված ճնշակների աշխատանքային ռեժիմներում խորհուրդ է տրվում օգտագործել RPT-3 G 160 տիպի առնտրային հաշվառքի սարքեր, նշելով նաև, որ վերջնական դիրքորոշում ձևավորելու համար անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ,

թ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի N1843-Ն որոշմամբ հաստատված «Գազի տնտեսությունում տարրերի տեխնիկական շահագործման կանոններ և աշխատանքի անվտանգության պահանջներ» տեխնիկական կանոնակարգի 6-րդ գլխի «ժբ» կետի համաձայն՝ գազասպառման սարքերի շահագործման ընթացքում տեխնիկական սպասարկումը և նորոգումը պետք է կատարեն կազմակերպությունների գազի ծառայությունները կամ գազի տնտեսության կազմակերպությունը պայմանագրային հիմունքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի №2399-Ն որոշմամբ հաստատված «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգի 195-րդ կետի համաձայն՝ գազատարերի և գազասպառման սարքերի շահագործման ընթացքում անվտանգության ապահովումը և տեխնիկական սպասարկումը վերապահվում է դրանց սեփականատերերին, կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի N1170-Ն որոշմամբ սահմանված կարգով հավաստված սերտիֆիկացված կազմակերպության հետ կնքված պայմանագրերով,

ժ. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 56-րդ հոդվածը, համաձայն որի Հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում ապրանքը մատակարարելու, աշխատանքի կատարումն ավարտելու և (կամ) ծառայության մատուցումն ավարտելու պահին,

ժա. Կանոնների 4.8 կետը, համաձայն որի՝ առնտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման հետ կապված բոլոր ծախսերը կրում է մատակարարը՝ բացառությամբ, երբ չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ փաստվել է առնտրային հաշվառքի սարքի այնպիսի խախտում, որի դեպքում մատակարարված բնական գազի վերահաշվարկն իրականացվում է Կանոնների 4.13 կետի համաձայն կամ բաժանորդի կողմից առնտրային հաշվառքի սարքի միջստուգաչափման ժամկետում մեկից ավելի անգամ առնտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման վերաբերյալ ներկայացված դիմումի ուսումնասիրության արդյունքում չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ չի հաստատվել առնտրային հաշվառքի սարքի խախտում,

ժբ. Կանոնների 6.5 կետը, համաձայն որի՝ Կանոնների 6.4 կետում սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում մատակարարը գրավոր (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) զգուշացնում է կազմակերպությանը՝ վճարումը չկատարելու դեպքում գազամատակարարման դադարեցման կամ սահմանափակման մասին: Եթե զգուշացման պահից սկսած 3 օրվա ընթացքում կազմակերպությունը վճարում չի կատարում, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել կամ սահմանափակել վերջինիս գազամատակարարումը,

ժգ. Կանոնների 6.6 կետը, համաձայն որի՝ կազմակերպության կողմից պարտքը ամբողջությամբ մարելու և այդ մասին մատակարարին հավաստիացնելուց հետո վերջինս պարտավոր է կազմակերպության հետ համաձայնեցված կարգով գազամատակարարումը վերականգնել հնարավորինս կարճ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 36 ժամվա ընթացքում,

ժդ. որ վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կանոնների՝

1) 4.8 կետը, մասնավորապես, որոշ դեպքերում ստուգաչափման հետ կապված ծախսերը Ընկերության փոխարեն հատուցել է «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը,

2) 6.5 կետը, մասնավորապես, մատակարարը Կանոնների 6.4 կետում սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում միայն պետք է գրավոր (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) զգուշացներ կազմակերպությանը՝ վճարումը չկատարելու դեպքում գազամատակարարման դադարեցման կամ սահմանափակման մասին, և այդ զգուշացման պահից սկսած 3 օրվա ընթացքում կազմակերպության կողմից վճարում չկատարելու դեպքում դադարեցներ գազամատակարարումը, այլ ոչ թե Կանոնների 6.4 կետում սահմանված ժամկետը լրանալուց անմիջապես հետո,

3) 6.6 կետը, մասնավորապես, «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից պարտքը ամբողջությամբ մարելուց հետո Ընկերությունը պարտավոր էր հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 36 ժամում, վերսկսել գազամատակարարումը, այլ ոչ թե որպես նախապայման պահանջեր կանխավճար,

ժե. որ անդրադառնալով «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումով նշված Ընկերության կողմից թույլ տրված մյուս իրավախախտումներին, ապա հարկ է փաստել որ՝

1) համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի N1843Ն որոշմամբ հաստատված «Գազի տնտեսությունում տարրերի տեխնիկական շահագործման կանոններ և աշխատանքի անվտանգության պահանջներ» տեխնիկական կանոնակարգի 6-րդ գլխի «ժբ» կետի՝ տեխնիկական սպասարկումը և նորոգումը պետք է կատարվի գազի տնտեսության կազմակերպության հետ պայմանագրային հիմունքներով, որի ընթացքում կողմերն են սահմանում ծառայությունների գինը, գազասպառման սարքավորումների տեխնիկական սպասարկման համար: Այլ ընկերությունների համեմատ ավելի բարձր գին վճարելու առնչությամբ հարկ է նշել, որ Հանձնաժողովի կողմից գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման հարաբերությունները կարգավորվում են միայն բնակչության ներտնային գազասպառման և բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպությունների մասով, որոնք «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ կիրառելի չեն, հետևաբար գազասպառման սարքավորումների տեխնիկական սպասարկման համար այլ

ընկերությունների համեմատ «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ավելի բարձր գին վճարելու գնահատումը Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից դուրս է,

2) հարկային օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում ապրանքը մատակարարելու, աշխատանքի կատարումն ավարտելու և (կամ) ծառայության մատուցումն ավարտելու պահին,

3) առնտրային հաշվառքի սարքի տիպաչափի ընտրության վերաբերյալ իրավակարգավորումները Հանձնաժողովի իրավական ակտերով սահմանված չեն, դրանց առնչվող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչության (ՀԱՅՊԵՏՍՏԱՆԴԱՐՏ) 2001 թվականի փետրվարի 13-ի №3-Վ հրամանով հաստատված ՊՐ 50.2.019-96 «Չափումների միասնականության ապահովման պետական համակարգ. Բնական գազի քանակ. Տուրբինային և ռոտացիոն հաշվիչների միջոցով չափումների կատարման մեթոդիկայի» համաձայն և դուրս են Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից,

4) ԱԳԼՃԿ-ներին ամրակցված G-650 և G-250 տիպի առնտրային հաշվառքի սարքերը Ընկերության նախաձեռնությամբ G-160 տիպի առնտրային հաշվառքի սարքերով՝ առանց գնային արժեքների փոխհատուցման փոխարինելու վերաբերյալ հարկ է նշել, որ «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից այդ առնչությամբ բավարար հիմնավորումներ չեն ներկայացվել, մինչդեռ համաձայն Ընկերության պարզաբանումների G-650, G-250 և G-160 տիպի առնտրային հաշվառքի սարքերի գները նույնն են,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 4.8, 6.5 և 6.6 կետերը խախտելու համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) Մեկամսյա ժամկետում փոխհատուցել «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության առնտրային հաշվառքի սարքերի ստուգաչափմանը վերաբերող չհիմնավորված ծախսերը և արդյունքների մասին տեղեկացնել Հանձնաժողովին.

2) սահմանված կարգով վերականգնել «Տելեմաք Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնքի Գազարինի խճուղու 61/4 և 61/5 հասցեներում գործող ԱԳԼՃԿ-ների գազամատակարարումը:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
29 մայիսի 2019թ.